

# ՄՄԿ Մեկնաբանություն 13

## Համատեղ վերահսկվող կազմակերպություններ. ձեռնարկողների ոչ դրամային ներդրումները

### Հղումներ

- ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»
- ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ»
- ՀՀՄՍ 18 «Հասույթ»
- ՀՀՄՍ 31 «Մասնակցություն համատեղ ձեռնարկումներում»

### Հարցադրումը

- 1 ՀՀՄՍ 31.48-ը վերաբերում է ձեռնարկողի և համատեղ ձեռնարկման միջև տեղի ունեցող թե՛ ներդրումներին, թե՛ վաճառքներին հետևյալ կերպ. «Երբ ձեռնարկողը համատեղ ձեռնարկման մեջ ներդրում կամ նրան վաճառում է ակտիվներ, ապա այսպիսի գործառնությունից առաջացող շահույթի կամ վնասի որևէ մասի ճանաչումը պետք է արտացոլի գործարքի էությունը:» Բացի այդ, ՀՀՄՍ 31.24-ում ասվում է. «համատեղ վերահսկվող կազմակերպությունը համատեղ ձեռնարկում է, որը ենթադրում է ընկերության, ընկերակցության կամ այլ միավորի հիմնադրում, որտեղ յուրաքանչյուր ձեռնարկող ունի բաժնեմաս (մասնակցություն):» Չկա հստակ ուղեցույց համատեղ վերահսկվող կազմակերպությունում (ՀՎԿ) ոչ դրամային ակտիվների ներդրումից առաջացող շահույթի կամ վնասի ճանաչման վերաբերյալ:
- 2 ՀՎԿ-ում ներդրումները ներկայացնում են ձեռնարկողների կողմից ակտիվների փոխանցումներ՝ ՀՎԿ-ի սեփական կապիտալում մասնակցություն ստանալու դիմաց: Նման ներդրումները կարող են ունենալ տարբեր ձևեր: Ներդրումները ձեռնարկողների կողմից կարող են կատարվել միաժամանակ ՀՎԿ-ի հիմնադրման ժամանակ կամ դրանից հետո: ՀՎԿ-ում ներդրած ակտիվների դիմաց ձեռնարկողի (ձեռնարկողների) ստացած հատուցումները կարող են նաև ներառել դրամական միջոցներ կամ այլ հատուցում, որը կախված չէ ՀՎԿ-ի ապագա դրամական հոսքերից («լրացուցիչ հատուցում»):
- 3 Հարցերն են՝
  - (ա) երբ պետք է ձեռնարկողը շահույթում կամ վնասում ճանաչի ՀՎԿ-ի սեփական կապիտալում մասնակցության դիմաց ոչ դրամային ակտիվի ներդրումից առաջացող շահույթի կամ վնասի համապատասխան մասը.
  - (բ) ինչպես պետք է ձեռնարկողը հաշվառի լրացուցիչ հատուցումը.
  - (գ) ինչպես պետք է ձեռնարկողի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացվեն չիրացված շահույթը կամ վնասները:
- 4 Սույն Մեկնաբանությունն առնչվում է այն հարցին, թե ինչպես պետք է ձեռնարկողը հաշվառի ոչ դրամային ակտիվների ներդրումները՝ ՀՎԿ-ի սեփական կապիտալում մասնակցության դիմաց, որը հաշվառվում է՝ օգտագործելով կամ բաժնեմասնակցության մեթոդը, կամ համամասնական համախմբման մեթոդը:

### Փոխհամաձայնություն

- 5 ՀՎԿ-ի սեփական կապիտալում մասնակցության դիմաց ոչ դրամային ներդրումների նկատմամբ ՀՀՄՍ 31.48-ը կիրառելիս ձեռնարկողը պետք է ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում ճանաչի շահույթի կամ վնասների այն մասը, որը վերագրելի է այս սեփական կապիտալում այլ ձեռնարկողների մասնակցություններին, բացառությամբ երբ՝
  - (ա) ներդրված ոչ դրամային ակտիվի (ակտիվների) սեփականության հետ կապված նշանակալի ռիսկերը և օգուտները չեն փոխանցվել ՀՎԿ-ին. կամ

- (բ) ոչ դրամային ներդրման գծով շահույթը կամ վնասը չի կարող արժանահավատորեն չափվել. կամ
- (գ) ներդրման գործարքը գուրկ է առևտրային բովանդակությունից, ինչպես այդ տերմինը նկարագրված է ՀՀՄՍ 16-ում:

Եթե կիրառվում է (ա), (բ) կամ (գ) բացառությունը, ապա շահույթը կամ վնասը համարվում է չիրացված և, հետևաբար, չի ճանաչվում շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ 6-րդ պարագրաֆը նույնպես կիրառվում է:

- 6 Եթե ՀՎԿ-ի սեփական կապիտալում մասնակցություն ձեռք բերելուց բացի, ձեռնարկողը ստանում է նաև դրամային կամ ոչ դրամային ակտիվներ, ապա ձեռնարկողը շահույթում կամ վնասում պետք է ճանաչի գործարքի գծով շահույթի կամ վնասի համապատասխան մասը:
- 7 ՀՎԿ-ում ներդրված ոչ դրամային ակտիվների գծով չիրացված շահույթը կամ վնասները պետք է հանվեն (բացառվեն) համապատասխան ակտիվներից՝ համամասնական համախմբման մեթոդը կիրառելու դեպքում, կամ պետք է հանվեն (բացառվեն) ներդրման արժեքից՝ բաժնեմասնակցության մեթոդը կիրառելու դեպքում: Նման չիրացված շահույթը կամ վնասները չպետք է ներկայացվեն որպես հետաձգված շահույթ կամ վնասներ ձեռնարկողի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

## **Փոխհամաձայնության ամսաթիվը**

---

1998 թ. հունիս

## **Ուժի մեջ մտնելը**

---

Սույն Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 1999 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը խրախուսվում է: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն ՀՀՄՍ 8-ին համապատասխան:

- 14 5-րդ պարագրաֆում նշված՝ ոչ դրամային ներդրումների գործարքների հաշվառման մոտեցման մեջ փոփոխությունները պետք է կիրառվեն առաջընթաց կերպով ապագա գործարքների նկատմամբ:
- 15 Սույն Մեկնաբանության մեջ ՀՀՄՍ 16-ով արված փոփոխությունները կազմակերպությունը պետք է կիրառի 2005 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը այդ ստանդարտը կիրառում է ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա այդ նույն վաղ ժամանակաշրջանի համար պետք է կիրառի նաև այս փոփոխությունները: